

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Փետրվարի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեին:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց դեսպանին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Հայաստանին մատուցած ծառայությունների համար, և ցանկացավ նորանոր բարի իրագործումներ հետագա գործունեության մեջ:

Հայաստանում ծառայության շրջանի մասին իր տպավորությունները ներկայացրեց նաև պրն Կլեմենտեն՝ հաստատելով, որ Սուրբ Էջմիածինը միշտ պիտի իր սրտում պահի:

Հանդիպմանը խոսվեց նաև Հայաստանյայց Առաքելական և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա ջերմ փոխհարաբերությունների մասին:

ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտող Թուրքմենստանի արտակարգ և լիազոր դեսպան Խիդիր Սապարլիևին:

Այս առիթով Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց դեսպանին և ցանկացավ նորանոր հաջողություններ հետագա ծառայության մեջ:

«Հայաստանն իմ երկրորդ հայրենիքն է»,- ասաց դեսպանն իր պատասխան խոսքում՝ նշելով, որ լավ տպավորություններով է մեկնում Հայաստանից:

Հանդիպմանը խոսվեց հայ-թուրքմենական հարաբերությունների և երկու երկրների միջև առկա համագործակցության մասին: